

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՖԿՍՊԻ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2022

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Որ՞ն է համարվում օլիմպիական գաղափարների համամարդկային հիմնական արժեք (1 միավոր)։

- 1) օրինապաշտությունը,
- 2) առողջության ամրապնդումը,
- 3) մարդասիրությունը (հումանիզմը),
- 4) բնապահպանությունը:

2 Ֆիզիկական կուլտուրայի տեսական դասերի ընթացքում ի՞նչը չի ձևավորում օլիմպիական արժեք (1 միավոր)։

- 1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նշանակության ներկայացումը կյանքի հետագա գործունեության համար,
- 2) խաղաղության նշանակության շեշտադրումը,
- 3) խաղերում հավասարության կարևորության ընդգծումը,
- 4) ժողովուրդների բարեկամության հաստատման կարևորումը:

3 Ո՞ր տարբերակի երկու թվերն են նշում այն միջոցառումները, որոնք ֆիզիկական կուլտուրայի գործնական դասերի ընթացքում ձևավորում են օլիմպիական արժեքներ (1 միավոր)։

- 1) խաղերի, մրցումների կազմակերպում,
 - 2) բացօթյա ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների անցկացում,
 - 3) ընդհանուր զարգացնող վարժությունների կատարում,
 - 4) միջոցառումների, տոնակատարությունների անցկացում.
- 1) 1-ը և 4-ը,
 - 2) 1-ը և 3-ը,
 - 3) 2-ը և 1-ը,
 - 4) 3-ը և 2-ը:

4 Ո՞ր տարբերակի երկու թվերն են նշում այն միջոցառումները, որոնք ֆիզիկական կուլտուրայի տեսական դասերի ընթացքում երեխաների մոտ ձևավորում են արդարացի խաղի կանոնները (1 միավոր)։

- 1) տեսանյութի ցուցադրման մեկնաբանում,
 - 2) զրույց՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ներգործությունը օրգանիզմի հիմնական համակարգերի վրա» թեմայով,
 - 3) օրինակների քննարկում,
 - 4) ֆիզիկական կուլտուրայի նշանակության բացահայտում՝ անձի համակողմանի ներդաշնակ զարգացման համար.
- 1) 1-ը և 2-ը,
 - 2) 1-ը և 3-ը,
 - 3) 2-ը և 4-ը,
 - 4) 3-ը և 4-ը:

5

Ո՞ր տարբերակի երկու թվերն են նշում այն գործողությունները, որոնք ֆիզիկական կուլտուրայի գործնական դասերի ընթացքում երեխաների մոտ ձևավորում են արդարացի խաղի կանոնները (1 միավոր).

- 1) ֆիզիկական վարժությունների տեխնիկայի ճիշտ կատարում,
- 2) խաղերի կանոնների պահպանում,
- 3) պատշաճ վարքի խրախուսում,
- 4) ամեն գնով հաղթանակին հասնելու ձգտում.

- 1) 1-ը և 3-ը,
- 2) 1-ը և 2-ը,
- 3) 2-ը և 3-ը,
- 4) 2-ը և 4-ը:

6

5-րդ դասարանում հանդրոլ բաժնի դասավանդման ժամանակ ո՞ր տարրը չի ուսուցանվում (1 միավոր).

- 1) գնդակի վարում,
- 2) գնդակի ընդունում և փոխանցում,
- 3) գնդակի նետում դարպասին,
- 4) դարպասապահի խաղ:

7

6-րդ դասարանում ֆուտբոլ բաժնի դասավանդման ժամանակ ո՞ր տարրը չի ուսուցանվում (1 միավոր).

- 1) հարված գնդակին,
- 2) գնդակի վարում,
- 3) գնդակի խլում,
- 4) գնդակի կասեցում:

8

Շարժողական ընդունակությունների համալիր մշակման համար ո՞ր մեթոդն է նպատակահարմար կիրառել (1 միավոր).

- 1) ամբողջական,
- 2) շրջանաձև,
- 3) փոփոխական,
- 4) կրկնողական:

9

Ներքոնշվածից կրտսեր դպրոցական տարիքում ո՞ր մեթոդին է տրվում առաջ-նահերթություն (1 միավոր).

- 1) մասնատված,
- 2) ստանդարտ կրկնողական,
- 3) ամբողջական,
- 4) համակցված:

10 Երկու ձեռքով վերևից վառվողի գնդակի փոխանցումն ուսուցանելիս ինչպիսի՞ն պետք է լինի ձեռքերի դիրքը (1 միավոր)։

- 1) կրծքի ուղղությամբ,
- 2) իջեցրած,
- 3) ուսերի ուղղությունից քիչ բարձր,
- 4) վեր ուղղված:

11 Որքա՞ն է միջին սարիքի դպրոցականների շարժողական ռեժիմի օրական ծավալը (1 միավոր)։

- 1) մինչև 1 ժամ,
- 2) 1,5-2 ժամ,
- 3) 2,5-3 ժամ,
- 4) 3 ժամից ավելի:

12 Դասի ո՞ր մասում կարելի է կեցվածքի ձևավորման վարժություններ հանձնարարել (1 միավոր)։

- 1) միայն ներգրավիչ մասում,
- 2) միայն հիմնական մասում,
- 3) ներգրավիչ և եզրափակիչ մասերում,
- 4) դասի բոլոր մասերում:

13 5-րդ դասարանում հանդրույի դասավանդման ժամանակ նշվածներից ո՞ր երեք անձնային հատկությունների ձևավորումն է առավելապես շեշտադրվում (1 միավոր)։

- 1) պատասխանատվություն, զսպվածություն, համառություն,
- 2) համագործակցություն, կարգապահություն, փոխօգնություն,
- 3) ինքնուրույնություն, նվիրվածություն, խիզախություն,
- 4) փոխօգնություն, համառություն, պատասխանատվություն:

14 7-րդ դասարանում աթլետիկայի դասավանդման ժամանակ նշվածներից ո՞ր երեք անձնային հատկությունների ձևավորումն է առավելապես շեշտադրվում (1 միավոր)։

- 1) աշխատասիրություն, համարձակություն, վճռականություն,
- 2) աշխատասիրություն, համառություն, կարգապահություն,
- 3) ինքնուրույնություն, խիզախություն, ընկերասիրություն,
- 4) համարձակություն, ինքնուրույնություն, նախաձեռնություն:

15

8-րդ դասարանում մարմնամարզության դասավանդման ժամանակ նշվածներից ո՞ր երեք անձնային հատկությունների ձևավորումն է առավելապես շեշտադրվում (1 միավոր)։

- 1) նախաձեռնություն, ինքնուրույնություն, պատասխանատվություն,
- 2) խիզախություն, վճռականություն, կարգապահություն,
- 3) վստահություն, համարձակություն, կարգապահություն,
- 4) ընկերասիրություն, խիզախություն, զսպվածություն:

16

Ո՞ր տարբերակի երկու թվերն են նշում ֆիզիկական կուլտուրայի դասերի բացթողյա անցկացման *առողջարարական* նշանակությունը (1 միավոր)։

- 1) ֆիզիկական վարժությունների կատարման հնարավորությունների ընդլայնում,
- 2) մաքուր օդի ներգործությունը շնչառական և սրտանոթային համակարգերի գործունեության վրա,
- 3) օրգանիզմի կոփում,
- 4) բնական արգելքների հաղթահարում.

- 1) 1-ը և 2-ը,
- 2) 2-ը և 3-ը,
- 3) 1-ը և 4-ը,
- 4) 3-ը և 4-ը:

17

Մարմնի ո՞ր կետերը պետք է հպվեն պատին, որպեսզի կեցվածքը համարվի ճիշտ (1 միավոր)։

- 1) գլխի հետին մասով, նստային մեծ մկանով, ազդրով, կրունկներով,
- 2) գլխի հետին մասով, թիակներով, նստային մեծ մկանով, կրունկներով,
- 3) թիակներով, նստային մեծ մկանով, սրունքներով, կրունկներով,
- 4) գլխի հետին մասով, թիակներով, սրունքներով, կրունկներով:

18

Ո՞ր տարբերակի երկու թվերն են նշում այն միջոցները, որոնք ֆիզիկական կուլտուրայի դասերի ընթացքում իրականացնում են գեղագիտական դաստիարակություն (1 միավոր)։

- 1) երաժշտության ուղեկցությամբ վարժությունների կատարում,
- 2) երկողմանի խաղ,
- 3) նորմատիվների հանձնում,
- 4) վարժությունների կատարման արտահայտչականություն.

- 1) 1-ը և 2-ը,
- 2) 1-ը և 4-ը,
- 3) 3-ը և 4-ը,
- 4) 2-ը և 3-ը:

19

Աշակերտները բաժանված են երեք խմբի և յուրաքանչյուր խումբ կատարում է իր վարժությունը, ո՞ր խմբի հետ պետք է լինի ուսուցիչը (1 միավոր)։

- 1) մարմնամարզական նստարանի վրա վարժություն կատարողների,
- 2) հենացատկեր կատարողների,
- 3) մարզապատի վրա վարժություն կատարողների,
- 4) հաջորդաբար բոլոր խմբերի:

20

Ուշագնացության ժամանակ ո՞րն է նախնական բժշկական օգնությունը (1 միավոր)։

- 1) գլխի քունքային մասում սառը թրջոց դնելը,
- 2) մարմնի հորիզոնական դիրք ապահովելը, ոտքերը բարձրացնելը, օդային հասանելիություն ապահովելը,
- 3) գլուխը բարձրացնելը, տաքացնելը, տաք ըմպելիքներ տալը,
- 4) կորդիամինի և կոֆեինի ներարկումներ:

21

Ո՞ր տարբերակի երկու թվերն են նշում այն սխալները, որոնք թույլ են տալիս դպրոցականները՝ բասկետբոլի գնդակն ընդունելիս (1 միավոր)։

- 1) ուղիղ ձեռքերով,
 - 2) ձեռքերի կիսաբաց մատները,
 - 3) բութ մատները՝ գնդակի վերնից,
 - 4) ձեռքերն առաջ պարզած, մատները լայն բացված դիրքով.
- 1) 1-ը և 2-ը,
 - 2) 1-ը և 3-ը,
 - 3) 2-ը և 4-ը,
 - 4) 3-ը և 4-ը:

22

Ո՞ր տարբերակի երկու թվերն են նշում այն սխալները, որոնք թույլ են տալիս 5-րդ դասարանի սովորողները՝ բասկետբոլի գնդակը վարելիս (1 միավոր)։

- 1) գնդակի վարում՝ ձեռքերի փոփոխմամբ,
 - 2) գնդակի վարում՝ ոչ ճիշտ կեցվածքով,
 - 3) գնդակի վարում՝ տարբեր ուղղությամբ,
 - 4) գնդակի վարում՝ ձեռքերի ոչ զսպանակաձև շարժմամբ.
- 1) 1-ը և 2-ը,
 - 2) 1-ը և 3-ը,
 - 3) 2-ը և 4-ը,
 - 4) 3-ը և 4-ը:

23

Պատասխանի ո՞ր տարբերակում են նշված այն սխալները, որի վրա պետք է ուշադրություն դարձնել կրտսեր դպրոցականների՝ «գլուխկոնձի առաջ» վարժությունն ուսուցանելիս (1 միավոր)։

- 1) ոչ լիարժեք խմբավորում,
- 2) ճակատով հպում ներքնակին,
- 3) հրման ուժեղ կատարում,
- 4) վարժության ոչ ամբողջական կատարում.

- 1) 1-ը և 2-ը,
- 2) 1-ը և 4-ը,
- 3) 3-ը և 2-ը,
- 4) 2-ը և 4-ը:

24


Ո՞ր տարբերակի երեք թվերն են նշում այն վարժությունները, որոնք մշակում են մկանային ուժ (1 միավոր)։

- 1) ընդհանուր զարգացնող,
- 2) սեփական քաշի հաղթահարման,
- 3) մարզագնդերով,
- 4) 800մ վազք,
- 5) մարզասարքերի վրա,
- 6) շարժախաղեր.

- 1) 1-ը, 3-ը և 6-ը,
- 2) 1-ը, 4-ը և 6-ը,
- 3) 2-ը, 3-ը և 5-ը,
- 4) 4-ը, 5-ը և 6-ը:

25


Ներքոհիշյալ թեստային վարժության միջոցով շարժողական ո՞ր ընդունակությունն է որոշվում (1 միավոր)։



- 1) դիմացկունությունը,
- 2) արագաշարժությունը,
- 3) ճարպկությունը,
- 4) շարժումների ճշգրտությունը:

26

Ներքոհիշյալ թեստային վարժության միջոցով շարժողական ո՞ր ընդունակությունն է գնահատվում (1 միավոր)։



- 1) ճարպկությունը,
- 2) արագաշարժությունը,
- 3) շարժումների ճշգրտությունը,
- 4) շարժումների կոորդինացիան։

27

Ո՞ր մեթոդը կկիրառեք մկանային ուժի մշակման համար (1 միավոր)։

- 1) ամբողջական,
- 2) կրկնողական,
- 3) փոփոխական,
- 4) անընդհատ։

28

Ո՞ր տարբերակի երկու թվերն են նշում այն վարժությունները, որոնք մշակում են դիմացկունություն (1 միավոր)։

- 1) վարժություններ մարզասարքերի վրա,
 - 2) մարզախաղեր,
 - 3) երկարատև վազք,
 - 4) ընդանուր զարգացնող վարժություններ.
- 1) 1-ը և 3-ը,
 - 2) 1-ը և 4-ը,
 - 3) 2-ը և 4-ը,
 - 4) 2-ը և 3-ը։

29

Ո՞ր տարբերակի երկու թվերն են նշում այն մեթոդները, որոնք մշակում են դիմացկունություն (1 միավոր)։

- 1) հավասարաչափ,
 - 2) կրկնողական,
 - 3) անընդհատ,
 - 4) ինտերվալային.
- 1) 1-ը և 3-ը,
 - 2) 1-ը և 4-ը,
 - 3) 2-ը և 4-ը,
 - 4) 2-ը և 3-ը։

30

Դասի հիմնական մասի առաջին կեսում նշվածներից ո՞ր շարժողական ընդունակություններն է նպատակահարմար մշակել (1 միավոր)։

- 1) մկանային ուժ, հավասարակշռություն, ճարպկություն,
- 2) արագաշարժություն, շարժումների կոորդինացիա, ճկունություն,
- 3) հավասարակշռություն, շարժումների ճշգրտություն, մկանային ուժ,
- 4) արագաշարժություն, դիմացկունություն, մկանային ուժ:

31

Նշված վարժություններից ո՞րն է համարվում վերին վերջույթների մկանային ուժը գնահատող թեստ (1 միավոր)։

- 1) վերձգումներ պտտաձողից,
- 2) պարանամագլցում,
- 3) գնդակի նետում,
- 4) կցագնդերով վարժություն:

32

Նշված վարժություններից ո՞րն է համարվում ճկունությունը գնահատող թեստ (1 միավոր)։

- 1) իրանի դարձում աջ, ձախ,
- 2) կանգնած դիրքից իրանի թեքում առաջ,
- 3) թափային վարժություններ,
- 4) արտակորում:

33

Ո՞ր տարբերակի երկու թվերն են նշում այն մեթոդները, որոնց միջոցով երեխաների մոտ մշակում են արագաշարժություն (1 միավոր)։

- 1) կրկնողական,
- 2) խաղային,
- 3) մրցակցական,
- 4) փոփոխական.

- 1) 1-ը և 2-ը,
- 2) 1-ը և 3-ը,
- 3) 2-ը և 4-ը,
- 4) 3-ը և 4-ը:


34

Դասարանը կատարում է ընդհանուր զարգացնող վարժություններ՝ կանգնած կամ շարասյունով, կամ շրջանով, կամ տողանով: Ո՞ր տարբերակում է նշված ուսուցչի սխալ դիրքը (1 միավոր):


Ծանոթություն՝ ուսուցիչ՝ աշակերտ




1




2



3



4



35

Ստորև նշվածներից երեքը ֆիզիկական կուլտուրայի սոցիալական գործառույթներ են: Նշել համարները (3 միավոր).

- 1) առողջության ամրապնդում,
- 2) ինֆորմացիոն գործառույթ,
- 3) ժողովուրդների համերաշխություն և բարեկամություն,
- 4) անձի համակողմանի զարգացում,
- 5) մրցակցական գործունեություն,
- 6) գեղագիտական նշանակություն,
- 7) պատրաստ աշխատանքին և հայրենիքի պաշտպանությանը,
- 8) միջառարկայական կապերի ձևավորում,
- 9) ակտիվ հանգստի կազմակերպում:

36

Ստորև նշվածներից երեքը լողի *կիրառական և առողջարարական* նշանակության հիմնական բաղադրիչներ են: Նշել համարները: (3 միավոր)

- 1) կյանքի անհրաժեշտ հմտության ձևավորում (ջրային տարածքի հաղթահարում),
- 2) նորմատիվային պահանջների կատարում,
- 3) օրգանիզմի կոփում,
- 4) անձնային հատկությունների դրսևորման հնարավորություն,
- 5) սրտանոթային և շնչառական համակարգերի գործունեության բարելավում,
- 6) մրցակցական հմտությունների ձեռքբերում,
- 7) միջառարկայական կապերի հաստատում,
- 8) իմացական ֆունկցիայի զարգացում:

37

Ստորև նշվածներից վազքի սկզբնական ուսուցման փուլում տեխնիկայի *n*^o ը երեք տարրերի վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել: Նշել համարները (3 միավոր).

- 1) վազքուղուց չձեղվել,
- 2) արագության դրսևորում,
- 3) ազդրի առաջբերում,
- 4) ձեռքերի և ոտքերի շարժումների կոորդինացիա,
- 5) շնչառության կարգավորում,
- 6) կրունկից թաթ դնել,
- 7) նմանողական վարժություններ,
- 8) արմնկային հողում ձեռքերի ծալում,
- 9) իրանի դիրքի պահպանում:

38

Որո՞նք են տեխնիկայի այն երեք հիմնական տարրերը, որոնց վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել հեռացատկի սկզբնական ուսուցման փուլում: Նշել համարները (3 միավոր)։

- 1) թափավազք,
- 2) իրանի դիրք,
- 3) արագաուժային ընդունակություններ,
- 4) վայրէջքի կատարում՝ կրունկից թաթին անցումով,
- 5) հրում,
- 6) անվտանգության կանոնների պահպանում,
- 7) հրվելուց հետո ոտքերի շարժում,
- 8) ձեռքերը առաջ տանել:

39

Ստորև նշվածներից երեքն արտահայտում են երեխայի *առավել* հոգնածության դրսևորման արտաքին տեսքի հատկանիշները: Նշել համարները (3 միավոր)։

- 1) դեմքի կտրուկ կարմրություն կամ գունատություն,
- 2) երբեմն հավասարաչափ, երբեմն անհավասարաչափ շնչառություն,
- 3) հևոց,
- 4) դեմքի աննշան կարմրություն,
- 5) առատ քրտնարտադրություն,
- 6) վարժության դանդաղ կատարում,
- 7) վարժությունների տեխնիկայի խախտում,
- 8) համառության բացակայություն:

40

Ստորև նշվածներից երեքը այն սկզբունքներն են, որոնք պետք է պահպանել մարմինը կոփելու ընթացքում: Նշել դրանց համարները (3 միավոր)։

- 1) սիստեմայնության,
- 2) ակտիվության,
- 3) անհատականության,
- 4) կիրառականության,
- 5) աստիճանականության,
- 6) գիտակցականության,
- 7) զննականության,
- 8) բազմակողմանի ներգործության ապահովման:

41

Վարժություններ կատարելիս նշվածներից երեքը բեռնվածության ծավալի կարգավորման եղանակներ են: Նշել համարները (3 միավոր).

- 1) խաղի ժամանակ աշակերտների քանակի փոփոխություն,
- 2) տեմպի փոփոխություն,
- 3) վարժությունների կատարման տևողության փոփոխում,
- 4) վազքի, քայքի տարածության փոփոխում,
- 5) այծիկի բարձրության փոփոխություն,
- 6) բարձրացատկի ձողի բարձրության փոփոխություն,
- 7) խաղահրապարակի չափերի փոփոխություն,
- 8) վարժության կրկնողության քանակի փոփոխություն,
- 9) մարզախաղերի անցկացման ժամանակ դարպասի չափսերի փոքրացում:

42

Մտորև բերված են տարածված 3 սխալներ, որոնք են աշակերտները թույլ են տալիս «քայլանցում» եղանակով բարձրացատկը սովորելու սկզբնական շրջանում: Նշել համարները (3 միավոր).

- 1) մարմինը ուղիղ պահել,
- 2) ձեռքերի վեր բարձրացում,
- 3) թափավազքի ժամանակ բոլոր վազքաքայլերի հավասարաչափ կատարում,
- 4) վայրէջք երկու ոտքի վրա,
- 5) թափավազքի կատարումը ոտնաթաթերի վրա,
- 6) թափավազքի սխալ անկյան ընտրություն,
- 7) ոչ ուժեղ հրում,
- 8) ոտքի թույլ թափ:

43

Ֆիզիկական զարգացման ո՞ր երեք ցուցանիշներն են *առավել* կարևորվում երեխաների ֆիզիկական դաստիարակության գործընթացում: Նշել համարները (3 միավոր).

- 1) մարմնի հասակ,
- 2) ֆիզիկական աշխատունակություն,
- 3) վերջույթների երկարություն,
- 4) գլխի շրջագիծ,
- 5) մարմնի քաշ,
- 6) հողերի շարժունակություն,
- 7) կրծքավանդակի շրջագիծ,
- 8) մկանների ուժ,
- 9) կոնքի լայնություն:

44

Նշվածներից 3-ը միջին տարիքի դպրոցականների շարժողական ռեժիմի բաղադրիչներ չեն համարվում: Նշել համարները (3 միավոր).

- 1) առավոտյան հիգիենիկ մարմնամաքություն,
- 2) ֆիզիկական կուլտուրայի դաս,
- 3) մրցումների մասնակցություն,
- 4) առողջ ապրելակերպի ուղղությամբ անհատական աշխատանքներ,
- 5) մարզական պարապմունքներ,
- 6) զբոսանք, բակային խաղեր,
- 7) ակտիվ հանգիստ,
- 8) ֆիզիկական կուլտուրայի դասին նախապատրաստվել,
- 9) ֆիզիկական կուլտուրայից տնային հանձնարարությունների կատարում:

45

Նշվածներից 3-ն արտահայտում են երեխայի *առավել* հոգնածությունը վարժությունների կատարման վրա: Նշել համարները (3 միավոր).

- 1) բացակայում է համագործակցությունը,
- 2) նվազում է վարժության տեմպը,
- 3) նվազում է դիմացկունության դրսևորումը,
- 4) վերարտադրում է շարժողական գործողությունը,
- 5) խախտվում է վարժության ռիթմը,
- 6) բացակայում է հետաքրքրությունը,
- 7) բացակայում է փոխօգնության դրսևորումը,
- 8) խախտվում է վարժության տեխնիկան:

46

Ստորև ներկայացվածներից 3-ը ֆիզիկական կուլտուրայի դասի արդյունավետությունն ապահովող գործոններն են: Նշել համարները (3 միավոր).

- 1) աշակերտների քանակը,
- 2) մեթոդիկան,
- 3) գույքի առկայությունը,
- 4) վարժությունների բարդությունը,
- 5) անհատական մոտեցումը,
- 6) ֆիզիկական կուլտուրայի դասի տեղը դասացուցակում,
- 7) ուսուցչի տարիքը,
- 8) դահլիճի չափսերը: